Ավետիք Իսահակյան

Նիկոլ Աղբալյան, 1898թ .

... Բոլոր հոգով պիտի կենտրոնանամ այն մեծ նյութի, գործի վրա, որ անունը «Յոթ օր ապատում, յոթ գիշեր անապատում» եմ դրել, որտեղ պիտի մտցնեմ բոլոր իմ հիմարություններն ու ոչ-հիմարությունները... Շա՛տ-շատերի մոտ եմ կարդացել այդ գրվածքի կոնսպեկտն ու մշակված կտորները, ե բոլոոն էլ գովել են... Մենակ այդ պիտի գրեմ և վերջ տամ գրելուս և գոհ կլինեմ, որ մեռնիմ... (Հեղափոխական էպոսիս թեման շա՛տ հետաքրքիր է):
Այժմ խնդրում եմ, որ պ. Արասխանյանցին դիմեք, որ ինձ տեղ տա «Մուրճ»–ում և այս տետրիցս տպագրեցեք «Մուրճ»–ում, հենց մոտ համարներից <մեկում>:
Շատ եմ ուզում «Մուրճ»–ում գրել, իբրև լուրջ օրգանում, ուստի խընդրում եմ, որ ինձ էլ* տեղ տաք:
Իմ ոտանավորները խստությամբ քննելիս բացատրեք մի քանի տողով լիրիզմի նշանակությունը, ապա անցեք ոտանավորներին: Քննադատելիս աչքի անցրեք և՛ տետրում գրածներս... Մի փոքր երկար կանգ սաեք ժողովրդական մոտիվների վրա: Դիտեցեք և՛ այն, որ իմ հանգերը այսպես կոչված «ճոխ» տեասկիցն են - օրինակ լիքն են այսպիսի 1 անընթ.– «մրմունջ-սրտունջ, շողա-ցողա, դողա-լողա»... Հենց ժողովրդական տարրը...
Եթե կարող եք՝ ջախջախեք իմ մեջ այս ինքնահավան - կարծիքը. <...>